

ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՏԱԹԵՎԻԿ ՓԻՐՈՒՄՅԱՆ

Սոցիալ-փիլիսոփայական արդի խնդիրների շարքում առանձնապես կարևոր ու արդիական է համաշխարհայնացման գործընթացների, ինչպես նաև հանդուրժողականության* որպես համակեցության անհրաժեշտ հարացույցի վերլուծությունը: Չնայած քաղաքակրթական զարգացումներին՝ հետարդիականության շրջանում անհանդուրժողականությունը իր բազմաթիվ դրսևորումներով (ահաբեկչություն, միջէթնիկական կոնֆլիկտներ, փոքրամասնության խտրականություն) վերաճել է գլոբալ հիմնախնդրի, այնուամենայնիվ հենց հանդուրժողականությունն է արժանի բազմակողմանի ուսումնասիրության¹: Բանն այն է, որ հանդուրժողականությունը ցույց է տալիս այն ուղիները, որոնք հնարավոր են դարձնում հաղթահարել մարդկային էությանը բնորոշ այնպիսի երևույթներ, ինչպիսիք են բռնությունը, անհանդուրժողականությունը, այսինքն՝ օգնում է լուծելու հանդուրժողականության և անհանդուրժողականության դիալեկտիկայի հարցը: Այդ տեսակետից հանդուրժողականության խնդրի տեսական իմաստավորումը և վերլուծությունը, ինչպես նաև հանդուրժողական գիտակցության ձևավորման հարցերը ձեռք են բերել տեսական և գործնական նոր հնչեղություն²:

Ի թիվս այլ պատճառների՝ հանդուրժողականության հիմնահարցի արդիականացմանը նպաստեցին համաշխարհայնացման գործընթացների շրջանակներում համակեցության նոր հարացույցների ձևավորման անհրաժեշտությունը, բազմաբևեռ աշխարհի առկայությունը և ազատական-ժողովրդավարական արժեքների տարածումը³: Բազմաբևեռ աշխարհում, այսինքն՝ տնտեսական (և ոչ միայն տնտեսական) գործունեության համաշխարհայնացման, սոցիալականացման նոր ձևերի ստեղծման, ազգային և էթնիկ ճյուղավորումների ենթատեքստում հանդուրժողականության սկզբունքը համամարդկային շահերի և պահանջումների համաձայնեցումն ապահովող լուրջ գործոն է: Քաղաքակրթության համաշխարհայնացման պայմաններում բազմակարծության, երկխոսության և հանդուրժողականության սկզբունքների վրա հիմնված նոր տեսակի սոցիալա-

* «Հանդուրժողականություն» բառը լատիներենից ֆրանսերենին է անցել մոտավորապես 16-րդ դարում, և ինչպես նշում է Յու. Հաբերմասը, այդ ժամանակահատվածում այն ուներ սահմանափակ իմաստ և համարժեք էր կրոնական հանդուրժողականությանը:

¹ Տե՛ս **Хабермас Ю.** Когда мы должны быть толерантными? О конкуренции видений мира, ценностей и теорий // "Социологические исследования", 2006, № 1, էջ 45:

² Տե՛ս **Боярчук Т. Н.** Феномен толерантности в условиях современного межкультурного взаимодействия. М., 2009, էջ 3:

³ Տե՛ս **Шалин В. В.** Толерантность. Ростов-на-Дону, 2000, էջ 23:

կան հարաբերությունների անհրաժեշտությունը դառնում է ակնհայտ հատկապես այն պարագայում, երբ վերլուծում ենք գերիշխանության և ենթակայության սկզբունքների վրա խարսխված միջազգային հարաբերությունների համակարգի ճգնաժամային արդի դրսևորումները: Հանդուրժողականության խնդիրը ձեռք է բերում համամարդկային նշանակություն, քանի որ ժամանակակից աշխարհում առանց հանդուրժողականության սկզբունքի, առանց երկխոսության և փոխզիջման հնարավոր չէ հասնել խաղաղ գոյակցության:

Հանդուրժողականությունը սոցիալական ներդաշնակության համար անհրաժեշտ և պարտադիր պայման է: Այս առնչությամբ մասնագիտական վերլուծություններում առանձնացվում են սոցիալական ներդաշնակության համար անհրաժեշտ հանդուրժողականության չորս հիմնական տարատեսակներ, որոնք նաև չեն հակասում բազմակարծության արժեհամակարգի գործառնությանը:

1. Այլ տեսակետների նկատմամբ համբերատար վերաբերմունք:

Մի շարք նշակույթներում «հանդուրժողականություն» հասկացությունը օգտագործվում է որպես «համբերատարություն» հասկացության հոմանիշ (լատիներեն՝ «toleratia», անգլերեն՝ «toleration», գերմաներեն՝ «Toleranz», ֆրանսերեն՝ «tolerance»): Լայն իմաստով հանդուրժողականությունը հանդես է գալիս որպես համբերատարություն այլ մարդկանց վարքի, սովորույթների, կենսակերպի, հավատալիքների, կարծիքների, գաղափարների, ազգության, սեռի, ռասայի նկատմամբ⁴:

Սակայն, չնայած այն հանգամանքին, որ հանդուրժողականությունը շատ հաճախ նույնացվում է համբերատարությանը, նրանց միջև կան նաև էական տարբերություններ: Հանդուրժողականության արժեքային ներուժը հասկանալու համար պետք է այն տարբերել համբերատարությունից:

Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1995 թ. որոշման՝ հանդուրժողականությունը քաղաքացիական հասարակության արժեք և սոցիալական նորմ է, համաձայն որի՝ տարբեր արժեքներ ունեցող մարդկանց և սոցիալական խմբերի միջև հնարավոր է հասնել կառուցողական փոխհարաբերությունների միայն հանդուրժողական գիտակցության և վարքի ձևավորման պայմաններում: Այդ պատճառով էլ «հանդուրժողականություն» հասկացության նշանակությունը շատ ավելի լայն է, քան սովորական «համբերատար վերաբերմունքը»: Համբերատարությունը ավանդաբար ընկալվել է որպես այլ կարծիքների նկատմամբ ներողամիտ վերաբերմունք: Մինչդեռ հանդուրժողականությունը ենթադրում է ոչ թե ներողամտություն, այլ բարյացակամություն, երկխոսություն և համագործակցության պատրաստականություն⁵: Հանդուրժողականությունը ամենևին էլ չի նշանակում համբերատար վերաբերմունք սոցիալական անարդարությունների նկատմամբ. այն հավասարազոր չէ անտարբերությանը: Լինել հանդուրժող չի նշանակում հրաժարվել սեփական հանդուրժողականության և ընդունել այլ աշխարհայացքներ⁶: Հանդուրժողականությունը սոցիալական արժեք է, որն ապահովում է մարդու

⁴ Տե՛ս «Толерантность» / Ушакова, Толковый словарь русского языка, 1935-1940:

⁵ Տե՛ս «Толерантность». Сборник под ред. М. П. Мчедлова. М., 2004, էջ 9:

⁶ Տե՛ս Рамазан Г. А. Этнополитология. Учебное пособие для студентов высших учебных заведений. СПб., 2004, էջ 45:

իրավունքը, ազատությունը և անվտանգությունը: Այն ակտիվ սոցիալական վարքի դրսևորում է, անհրաժեշտություն, որին մարդը հանգում է ինքնակամ և գիտակցաբար: Առաջանալով հասարակական գիտակցության մեջ՝ հանդուրժողականությունը ձևավորվում է որպես հասարակական իդեալ և ենթադրում է հասարակության կողմից տարբեր դիրքորոշումների ընդունում⁷: Մինչդեռ համբերատարությունը պասիվ-համբերատար վերաբերմունք է շրջապատող իրադարձությունների նկատմամբ, այսինքն՝ հանդուրժող մարդը չպետք է համբերատար լինի ամեն ինչի հանդեպ: Ոչ մի դեպքում չպետք է հանդուրժել բոլոր այն դրսևորումները, որոնք խախտում են համամարդկային բարոյականության հիմնական սկզբունքները: Այդ իսկ պատճառով էլ հարկավոր է տարբերել համբերատար, հանդուրժող վերաբերմունքը «ստրկական» համբերատարությունից:

2. Բոլոր մշակույթների և ճանաչողական կողմնորոշումների իրավահավասարություն:

Համաշխարհայնացումը «փոխկապակցված աշխարհի» մասին այնպիսի մի հայեցակարգ է, ըստ որի՝ տարբեր ազգերի և մշակույթների գոյությունը հնարավոր է միայն այն դեպքում, եթե վերջիններս որպես հրամայական ընդունում են մշակութային բազմակարծությունը: Համաշխարհայնացման և մշակույթների ինտեգրման գործընթացները շատ հաճախ դառնում են հակամարտության և անհանդուրժողականության դրսևորումների պատճառ, քանի որ այն հարուցում է մշակութային ինքնատիպության կորստի վտանգ: Պատահական չէ, որ Ս. Հանթինգթոնը նշում է, թե ապագա հասարակության մեջ հակամարտության աղբյուր կդառնան ոչ թե տնտեսությունը, ոչ թե գաղափարախոսությունը, ոչ թե քաղաքականությունը, այլ մշակույթը⁸: Հանգամանք, որն իր հերթին հարուցում է համաշխարհայնացման գործընթացներին հակազդելու ներքին անհրաժեշտություն: Այդ տեսակետից հակահամաշխարհայնացումը համաշխարհայնացման գործընթացների անաչառությունը, անխուսափելիությունը և դրական էությունը ժխտող հայացքների համակարգ է, որն առաջին հերթին ուղղված է «միաբևեռ» աշխարհ կառուցելու արևմտյան քաղաքակրթության ջանքերի դեմ: Համաշխարհայնացումը մարդկությանը մշտապես հիշեցնում է, որ աշխարհը թեև բազմաբնույթ է, բայց և միասնական, որ միևնույն գործընթացների նկատմամբ տարբեր մոտեցումներն անխուսափելի են՝ հաշվի առնելով տարբեր մշակույթների առկայությունը, սակայն արդեն անվտանգ չեն ինչպես կոնկրետ սոցիալական սուբյեկտների, այնպես էլ աշխարհի համար ամբողջությամբ: Վառ օրինակ են նոր ժամանակներում Եվրոպայում ծագած արյունահեղ կրոնական պատերազմները, որոնցից դուրս գալու ճանապարհը դարձավ հանդուրժողականության օրինականացումը: Հայացքների և արժեքների բազմազանության անխուսափելիությունը ենթադրում է բոլոր մշակույթների և ճանաչողական կողմնորոշումների իրավահավասարություն: Համաշխարհայնացման պայմաններում

⁷ Տե՛ս **Кораблева А. А.** Аксеологический подход к определению толерантности. М., 2012, էջ 43:

⁸ Տե՛ս **Хантингтон С.** Столкновение цивилизаций, М., 2003, էջ 191:

հանդուրժողականությունը քաղաքակիրթ փոխզիջման նորմ է միմյանց հետ մրցակցող մշակույթների միջև և ապահովում է բազմազանության գոյությունը: Որպես սոցիալական արժեք՝ այն առաջանում է սոցիոմշակութային տարածությունում և իրականացնում է մշակութապահպան գործառույթ՝ պահպանելով խմբի, էթնոսի, հասարակության մշակութային արժեքներն ու փորձը⁹:

Հենց այս ընթացքում է առաջանում մշակութային երկխոսության և կեցության համամարդկային նորմերի ստեղծման անհրաժեշտությունը: Սակայն համաշխարհայնացման գործընթացները միաժամանակ ստեղծում են այնպիսի նախապայմաններ, որոնք դժվարացնում են մշակույթների միջև երկխոսությունը: Որպեսզի նման մշակութային երկխոսություններն ու շփումները կայանան, նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել հանդուրժողականության սկզբունքը տարբեր արժեքների, նորմերի, դիրքորոշումների, կարծրատիպերի առնչությամբ: Այս սկզբունքը հարկավոր է օրինականացնել որպես քաղաքացիաիրավական նորմ: Միայն նմանատիպ իրավական օրինականության օգնությամբ հանդուրժողականությունը կդառնա տարբեր մշակույթների երկխոսության նախադրյալ և բարոյական արժեք¹⁰: Սոցիալական մակրոսոբյեկտների փոխկապվածության նման կառուցվածքը նշանակում է, որ այսուհետ միջազգային հարաբերություններում հանդուրժողականության սկզբունքը դադարում է կրել բարոյական բնույթ և ձեռք է բերում սոցիալ-քաղաքական հրամայականի հատկություններ:

3. Մետաֆիզիկական, կրոնական և գաղափարախոսական այլընտրանքների հանդուրժում:

Համաշխարհայնացումը վերածվել է մարդկության ամբողջականացման հավակնություններ ունեցող, այսինքն՝ մեկ միասնական գործառույթ համակարգ ու կարգավորվածություն հաստատելու քաղաքական յուրահատուկ «թվաբանության»: Ուշագրավն այն է, որ նոր աշխարհակարգի ստեղծման գաղափարախոսության հիմքում ընկած են «հավաքական կյանքի» և «մրցակցող անհատականությունների» մշակույթների՝ իրար հակասող երկու սկզբունքներ, քանի որ համաշխարհայնացումը մի կողմից հավակնում է մարդկության ամբողջականացումը կառուցել հավաքական կյանքի մշակույթի սկզբունքի վրա՝ փաստելով, որ արդի հիմնախնդիրներն այնքան համընդգրկուն են, որ ազգ-պետության կառույցների որոշ գործառույթներ սահմանափակելու միջոցով է միայն հնարավոր ստեղծել մարդկության գոյատևման հուսալի և կառավարելի երաշխիքներ: Եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ «հավաքական կյանքի մշակույթը» ի վերջո դարձել է ամբողջատիրական և բռնատիրական հասարակարգերի քաղաքական իշխանության գաղափարական գլխավոր հիմունքներից մեկը, ապա դժվար չէ կռահել, որ արդի համաշխարհայնացման գաղափարախոսության մշակութային այդ հիմունքը վաղ թե ուշ կարող է դառնալ, եթե արդեն այդպիսին չէ, ամբողջատիրական համաշխարհային կարգի հիմունք: Մյուս կողմից, սակայն, համաշխարհայնացման

⁹ Տե՛ս **Кораблева А. А.**, նշվ. աշխ., էջ 43:

¹⁰ Տե՛ս **Шалин В. В.**, նշվ. աշխ., էջ 114-116:

նախագծի գործառույթյան հիմքում ընկած է տնտեսության կազմակերպման ու կանոնակարգման, ինչպես նաև հոգևոր ու քաղաքական կյանքի կազմակերպման «մրցակցող անհատականությունների» սկզբունքը¹¹:

Համաշխարհայինացման արևմտյան նախագծի պարադոքսներից մեկն այն է, որ մի կողմից Արևմուտքի երկրների ներսում ղեկավարվում են ժողովրդավարության, բազմակարծության և հանդուրժողականության սկզբունքներով, իսկ մյուս կողմից՝ ոչ արևմտյան երկրների հետ փոխհարաբերություններում՝ գերիշխանության և անհանդուրժողականության սկզբունքներով: Այս պարադոքսը նկատի ունենալով՝ Ա. Պանարինը դիպուկ նկատում է, որ «համաշխարհայինացման երևույթն ունի երկու դեմք՝ արտաքին և ներքին: Արտաքին կողմը արտացոլում է ժամանակակից հումանիստական փիլիսոփայության բոլոր նախկին հումանիստական գաղափարները՝ զարգացում, ընդհանուր բարեկեցություն, մարդու իրավունքներ և այլն: Սակայն նրա ներքին կողմը, որը գաղտնի է պահվում հասարակության լայն զանգվածներից, բացահայտված լինելով՝ կարող է իսկական անորոշություն առաջացնել մարդկային գիտակցության մեջ»¹²: Իրականում խորը ուսումնասիրության դեպքում պարզվում է, որ ժամանակակից հասարակության հումանիստական ձեռքբերումները չեն համապատասխանում համաշխարհայինացման տրամաբանությանը: Առաջին հերթին դա վերաբերում է ժողովրդավարություն երևույթի գործածմանը կամ ժողովուրդների քաղաքական ինքնիշխանության կիրառմանը: Ժողովրդավարությունը նշանակում է, որ իշխանության գործառույթները իրականացնում են նրանք, որոնց ընտրել է ժողովուրդը իր կամքի ազատ արտահայտման միջոցով, և ժողովրդի ընտրյալները պարտավոր են իրականացնել ժողովրդի կամքը՝ ամբողջությամբ ղեկավարվելով նրա կողմից: Մինչդեռ, ինչպես իրավագիտերեն գրում է Պանարինը, ժամանակակից համաշխարհայինացման քաղաքականությունը ոչ մի ընդհանուր բան չունի «ժողովրդավարություն» հասկացության իրական նշանակության հետ, քանի որ գործարկվող համաշխարհայինացման քաղաքականությունը ենթադրում է, որ իշխանության իրական կենտրոնները իրենց որոշումները կայացնելիս ոչ թե պետք է ղեկավարվեն տեղական ընտրողների, այլ աշխարհի քաղաքական և տնտեսական հզոր ուժերի կամքով: Այդ պատճառով է, որ համաշխարհայինացման դարաշրջանում զանգվածային կրթական ծրագրերը շուկայական անշահավետության պատրվակով սառեցվում են, քանի որ անկիրթ և ազգային արժեքներին անծանոթ զանգվածներին ավելի հեշտ է կառավարել: «Գլոբալիստները» ողջ ուժերով փորձում են թուլացնել և վարկաբեկել ազգային պետությունները, քանի որ նրանք խանգարում են իրենց գլոբալ գավթողականությանը¹³: Այս համատեքստում ժողովրդավարության, բազմակարծության և հանդուրժողականության սկզբունքները արևմտյան հասարակության հիմնարար սկզբունքներից աստիճանաբար ավելի ու ավելի վերածվում են նպատակային գործիքների, որոնք կիրառվում են ընտրողաբար: Հատկանշական է Բ. Բլինթոնի խոստովանությունը, որն արել է

¹¹ Մանրամասն տես **Է. Ա. Հարությունյան**, Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր., 2004, էջ 74:

¹² **Панарин А.** Искушение глобализмом. М., 2003, с. 6.

¹³ Տես նույն տեղը, էջ 9:

մինչ ԱՄՆ նախագահ դառնալը. «Մենք պաշտպանում ենք ժողովրդավարությունը ոչ հոգևոր բարության պատճառով: Պատճառն այն է, որ ժողովրդավարությունը պաշտպանում և ապահովում է մեր սեփական տնտեսական շահերը և մեր անվտանգությունը: Ժողովրդավարական երկրները չեն պատերազմում միմյանց դեմ, նրանք չեն պաշտպանում ահաբեկչությունը, և դրա պատճառն այն է, որ ժողովրդավարություններն առավել հակված են հարգելու քաղաքացիական ազատությունները, սեփականության իրավունքը. այն ստեղծում է մի այնպիսի հիմնալի հիմք, որի վրա կարող է ամրակայվել համաշխարհային կարգը»¹⁴:

4. Այլ տեսակետների նկատմամբ հարգանք:

Համաշխարհայնացման գործընթացները ենթադրում են անցում գերիշխանության և ենթակայության սկզբունքների վրա հիմնված հիերարխիկ համակարգից դեպի ժողովրդավարության, երկխոսության և հանդուրժողականության սկզբունքների վրա հիմնված համակարգ: Հանդուրժողականությունը երկխոսության կարողություն է, որը ձեռք է բերվում աշխարհի և ինքնաճանաչողության գործընթացում և հնարավոր է միայն «Ուրիշի» առկայության դեպքում: Ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ անձնական երկխոսությունը հոգևոր-մշակութային զարգացման անհրաժեշտ պայմաններից մեկն է: Հենց մարդկանց փոխհարաբերության ընթացքում է բացահայտվում երկխոսության նշանակությունը: Այս պարագայում հանդուրժողականությունը «Ուրիշի» նկատմամբ հարգանքն է¹⁵: Արժեքաբանական տեսանկյունից հանդուրժողականությունը հանդես է գալիս «Ես»-ի և «Ուրիշ»-ի՝ որպես համընդհանուր արժեքների հավասարության ընդունում: Երբ խոսում ենք մեկ ուրիշի կամ այլ սոցիալական խմբի նկատմամբ դրսևորվող հանդուրժողական կամ անհանդուրժողական վերաբերմունքի մասին, ապա պետք է նկատի ունենանք «Մենք»-«Ուրիշ» երկակի սահմանների հարցը, որտեղ ի սկզբանե առկա է օտար լինելու տարրը: Որքան խիստ են դրված սահմանները, և որքան մեծ է օտարումը, այնքան ուժեղ է արտահայտված «Ուրիշ»-ների նկատմամբ անբարյացակամությունը՝ այն բանի մերժումը, որ նրանք սեփական մտքերի, ցանկությունների, հեռանկարների և այլնի կրողներ են: Մերժել և չհարգել ուրիշի ցանկությունը, միտքը, մղումը նշանակում է մերժել նրան առհասարակ, չընդունել նրա գոյության իրավունքը, քանզի ցանկանալ, մտածել, գործել նշանակում են ապրել, գոյություն ունենալ: Այսինքն՝ երբ ուժեղ է արտահայտված սահմանազատումը, ավելի ուժգին է անբարյացակամությունը, հետևաբար նաև՝ անհանդուրժողականությունը:

Երբեմն, հատկապես առօրյա գիտակցության մեջ, հանդուրժողականությունը շփոթում են ինքնասիրության կորստի, անսկզբունքային հարմարվողականության, չափից դուրս զիջողականության հետ: Հանդուրժողականության հանդեպ նման կասկածամիտ վերաբերմունքը, որը հիմնված է այդ հասկացության թյուրըմբռնման վրա, առաջացնում է ներքին դիմադրություն ու հոգեբանական ինքնապաշտպանություն: Այս սխալից

¹⁴ Поликарпов В. С. Горизонты третьего передела мира (философские размышления). М., 1997, с. 118.

¹⁵ Տես Боярчук Т. Н., նշվ. աշխ., էջ 5:

խուսափելու համար պետք է նկատի ունենալ, որ հանդուրժողականությունն ավելի շուտ ուղղված է դեպի դուրս, դեպի ուրիշը և միայն հետադարձ կապով է առնչվում սեփական անձին: Ինքնասիրությանն ու ինքնագնահատականին վնասելու վտանգ չի սպառնում. հանդուրժող կարող է լինել միայն ինքնահաստատված, հոգեբանական բարդությամբ զերծ, հաստատուն ու դրական ինքնագնահատական ունեցող անձը (խումբը): Հանդուրժողական կեցվածքը մարդկային փոխհարաբերությունների ժողովրդավարական ոճի անխզելի մասն է, որը պայմաններ է ստեղծում հարաբերությունները կառուցողական հունով տանելու համար և առավելագույնս զերծ է պահում ապակառուցողական զարգացումներից:

Հանդուրժողական դիրքորոշումը չի ենթադրում աներկբայորեն զիջող կեցվածք: Հանդուրժողական դիրքերից կարելի է և՛ մերժել, և՛ չհամաձայնել, և՛ արժանապատվորեն պահպանել սեփական տեսակետը: Ամենարժեքավորն այստեղ այն է, որ չկա դիմացինի անձի ժխտումը, հարաբերություններում նվաստացած չէ որևէ կողմը, այսինքն՝ եթե նույնիսկ չկա փոխհամաձայնություն, և հաղորդակցվող սուբյեկտներից որևէ մեկը չի համոզել մյուսին, այնուամենայնիվ նրանք թշնամիներ չեն դարձել, գիտակցում են, որ յուրաքանչյուր ոք ունի կարծիք և դիրքորոշում ունենալու իրավունք, և բնավ պարտադիր չէ, որ դրանք համընկնեն: Ապակառուցողական տարրերի բացակայությունը կնպաստի, որ նույնիսկ ամենալարված իրավիճակում գտնվեն լուծումներ, և իրադրությունը չդառնա կոնֆլիկտային և անկառավարելի: Հանդուրժողականությունը թույլ է տալիս նպաստավոր վճիռներ կայացնել՝ երկուստեք ավելի արժանապատիվ վիճակ ապահովելով մրցակցության կամ կոնֆլիկտային իրավիճակում գտնվող կողմերի համար:

Դժվար է լինել հանդուրժող, երբ հարաբերակցվել են այնպիսի մարդիկ կամ խմբեր, որոնց միջև կանգնած է օտարման պատը, որտեղ ոտնահարված են արդարության նորմերը: Դժվար է լինել հանդուրժող, երբ հասարակական կյանքում տիրապետող են սոցիալական բևեռացումն ու կույր շահամոլությունը: Սա այն դեպքն է, երբ իշխողը փոխադարձ ատելությունն է, որն ինքնին նշանակում է դիմացինի գոյության մերժում: Ասել է թե՛՝ ատելությունն ինքնին հանդուրժողականության բացակայություն է: Ատելությունից մինչև կոնֆլիկտ մեկ քայլ է միայն: «Ես»-ը և «Ուրիշ»-ը այն աստիճան են տարանջատված, որ նույնիսկ անհնարին է թվում, որ երբևէ այդ երկու հոգեբանական կազմավորումների միջև փոխհանդուրժողական հարաբերակցման որևէ եզր գտնվի:

Ավելի դյուրին է հանդուրժող լինել այն անձի կամ խմբի նկատմամբ, որի մեջ հիվանդագին ուժգնությամբ արտահայտված չեն անհատական կամ խմբային եսասիրական շահերն ու նկրտումները: Հայտնի է, որ եսակենտրոն դիրքորոշումը ոչ միշտ է հաղթանակներ բերում անձին կամ խմբին: Հանդուրժողական լինելուց պետք չէ վախենալ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է գիտակցել, որ սեփական շահերի և պահանջմունքների բավարարումը հնարավոր է միայն մյուսների շահերն ու պահանջմունքները հաշվի առնելով և հարգելով: Այս ենթատեքստում հանդուրժողականությունը ենթադրում է մարդու իրավունքների ընդունում, յուրաքանչյուր մշակույթի ներկայացուցչի ազատ արտահայտման իրավունք, բոլորի հա-

վասարության ճանաչում, այլ ազգերի սովորույթները, ձեռքբերումները, մշակութային արժեքները ընդունելու պատրաստականություն: Ի վերջո չպետք է մոռանալ, որ հանդուրժողականությունը՝ որպես ազգերի և մշակույթների միջև փոխհարաբերության հրամայական, նախ և առաջ հիմնվում է տարբերության և բազմազանության գոյության վրա (էթնիկական, սոցիալական, կրոնական, մշակութային, քաղաքական, ռասայական, տարիքային), այսինքն՝ հանդուրժողականությունը փոխադարձ հարգանք և ազատություն է:

Հանդուրժողականության վերոնշյալ չորս հիմնական տարատեսակները քաղաքացիական հասարակության սոցիալական նորմ և արժեք են, համաձայն որոնց՝ քաղաքացիները թեև ունեն քաղաքական ու սոցիալական տարբեր կողմնորոշումներ, բայց հանդուրժողականության շնորհիվ կարող են ապրել ներդաշնակ:

Ուսումնասիրելով այս դիրքորոշումները՝ ակնհայտ է դառնում, որ «հանդուրժողականություն» հասկացությունը ենթադրում է զարգացման հնարավորություն և անհրաժեշտություն, այդ պատճառով էլ կարող է և պետք է ընդունվի որպես ժամանակակից մշակույթի կողմնորոշման հատկություն, որպես արդի սոցիոմշակութային տարածության կառուցարկման մեխանիզմ: Ջարգացումը հասարակության կենսագործունեության կարեվոր նախապայման է, իսկ հանդուրժողականությունը՝ նորմալ զարգացման անհրաժեշտ պայման: Ակնհայտ է, որ ինչպես սոցիալական տեսություններում, այնպես էլ միջազգային հարաբերությունների պրակտիկայում արդի աշխարհը պետք է առաջնորդվի բազմակարծության և հանդուրժողականության սկզբունքներով: Եթե համաշխարհայնացման մասնակիցները չհրաժարվեն իրենց միակողմանի հայացքներից, ապա կմեծանա աշխարհակարգի քաոսային վիճակում հայտնվելու վտանգը: Նման փակուղուց դուրս գալու միակ ճանապարհը բազմակարծության, հանդուրժողականության և համագործակցության սկզբունքների վրա հիմնված սոցիալական նոր հարաբերությունների հաստատումն է: Մարդկության համար անհանդուրժողականության հաղթահարումը դարձել է ճգնաժամից դուրս գալու կարևորագույն միջոց, և, ինչպես իրավացիորեն նշել է ամերիկացի գիտնական Լ.Չայզենբերգը, «եղբայրությունը» կարծես թե վերածվել է գոյատևման նախապայմանի¹⁶: Միայն բանական հանդուրժողականությունը կարող է մարդկությանը ապրելու հնարավորություն տալ՝ չթողնելով ընկնել պատերազմների մեջ, որտեղ հաղթողներ չեն լինի:

ТАТЕВИК ПИРУМЯН – Проблема толерантности в контексте глобализации. – Глобализационные процессы, охватившие современный мир, предполагают движение не только к межкультурному сближению и интеграции, но и к разобщению и конфликтам. В статье анализируется и актуализируется проблема толерантности как необходимой парадигмы сосуществования. Выделены четыре проявления толерантности: терпимость к другим мнениям; равенство всех культур и когнитивных ориентаций; терпимое отношение к метафизическим, религиозным и идеологическим альтернативам; уважение к другим точкам зрения.

¹⁶ Տե՛ս **В. Гейзенберг.** Физика и философия. Часть и целое. М., 1990, էջ 145:

TATEVIK PIRUMYAN – *The Problem of Tolerance in the Context of Globalization.* – Current globalization processes of contemporary world cultures approach not only each other and integrate into each other but also disengage and disintegrate. In this context the article analyzes tolerance as an important and necessary paradigm of coexistence. The article presents four main manifestations of tolerance: tolerance towards other viewpoints; equality of all cultures and cognitive orientations; tolerance towards metaphysical, religious and ideological alternatives; respect for other viewpoints.